

ւորականութիւնն ու յայտնի անձինք նոյնպէս ցաւակցութիւն են յայտնել Բաքուի եղբայրասպան դէպքերի համար և հրապարակաւ յայտնել, որ այդ դէպքերը ոչ ազգային ատելութեան, ոչ տնտեսական կացութեան և ոչ էլ ֆանատիկսութեան արդիւնք են. այլ, որ նրանք ծագել են արտաքին պատահական պատճառներից և դադանի՝ ինչ որ գծողխային ոյժից: Ամսոյս 14-ին նոյն նահատակների համար հոգեհանգիստ կատարուեց և Միածնաէջ տաճարում ամբողջ միաբանութեան, ճեմարանի ուսուցիչների և ուսանողների, նաև վշտահար բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ: Հանգանակութիւն է բացուած գծբաղդ որբացածների համար՝ առանց կրօնի և ազգութեան խտրութեան:



ԲԱԳՈՒԻ ԱՂԵՏԸ ԵՒ ՀՈԴԵԻՈՐԱԿԱՆԻ ԶԷՆՔԸ.

Արիւնաներկ երկրի սահմանակից, առաւել անդորր և չաղաքակիրթ համարուող երկիրը անսպասելի կերպով ողորդուեց հայի արիւնով, ողորդուեց պարզամտութեան և տգիտութեան շնորհիւ: Այն, փետրվարի 7, 8 և 9-ին Բաքուում թափուեց հազարաւոր անմեղ մարդկանց արիւնը, կողոպտուեց և կրակի ճարակ դարձաւ նրանց աշխատանքն ու գոյքը և այնտեղ ուր աշխատանքի երգն էր լսւում և հոսում տասնեակ հազարաւոր մարդկանց մաքուր քրտինքը, անմեղ արիւն հոսեց և կրակի լեզուներ անողոք կերպով լափեցին քաղաքի զանազան մասերը: Կովկասեան մամուլի բոլոր թղթակիցներն իրենց անգործ յայտարարեցին նկարագրելու այն, ինչ որ տեղի է ունեցել այդ շէն և հարուստ քաղաքում, որը Ռուսաստանի քաղաքների մարգարիտն էր և հարստութեան մի ծով: Դէպքերն համեմատուած են «Բարդուղիմէոսեան գի-

շերուայ» հետ և գտնում, որ Բաբուն մոռացնել տուաւ շատ և շատ արիւնոտ էջեր հին և նորագոյն պատմութիւնից։

Վայրագութիւններ կատարողը ի հարկէ կոյր ամբօխն էր, որով միշտ օգտուել են մթին սլփերը, ծածկուած ճարպիկ թշնամին, որոնք վառել են կրակն ու իրենք հեռու փախել, ապահով գիտելու և զուարճանալու իրենց աւերիչ գործով։

Հին ժամանակ ճարպիկ ղեկավարները մարդկանց բաժանում էին պատրիցիանների, ստրուկների կամ բարբարոսների և կոտորում, կամ կոտորել տալիս, յետոյ նոյն ճարպիկ, ազահ և փառասէր ձեռնածուները սկսան բաժանել մարդոց հաւատացողների և հեթանոսների, ուղղափառների և հերետիկոսների, հերձուածուների և ազանդաւորների. մեր ժամանակն էլ բաժանում են ազգութիւնների, սերմանում տտելութիւն այդ՝ ազգայնական հողի վրայ, կռուեցնում, քարուքանդ անել տալիս և աւերակների վրայ ապահով հիմնում իրենց կարծեցեալ բարեկեցութիւնը։ Եւ ով կարող է աւելի հեշտ և շուտ խառուել, ով կարող է կոյր գործիք լինել, գազանութեան հասնել և մոռանալ մարդկային բոլոր արժանապատուութիւնն ու տստուածային պատկերը, դարձեալ կոյր և աղքատ, խաւարի մէջ խարխափող կոյր ամբօխը։ Այս ճշմարտութիւնը նորից կրկնուեց այս անգամ միևնոյն երկրի զաւակների, դարաւոր դրացիների և խաղաղ աշխատող եղբայրների մէջ և բնական է ոչ առանց շարժող ձեռքի, ոչ առանց մթին սլփի, որը եթէ ց'այսօր երևան չի եկել, կամ կասկածանքի առարկայ է դեռ, շուտով կը պարզուի և կը բանայ խեղճ և միամիտ, օրական աշխատանքով և մաքուր քրտինքով ապրող տարիքաւոր, բայց միշտ մանկամիտ կոյր ամբօխի աչքը։ Եթէ անտառի ծառերը նկատեցին, թէ որտեղից էր կացնի կոթը, երևի եղբայրասպաններն իրենց արիւնոտ ձեռքերը գիտելիս կը տան իրենց այդ հարցը և կը ճանաչեն, թէ որտեղից էր կացին շարժող սլփը։ Երեք օրուայ վայրագութիւնից և

կոտորածից յետոյ թուրք և հայ ժողովրդի հոգեւորականներն ու ականաւոր անձինք մեծ թափօրով փողոցներ շրջելով իրար գրկած, միմիայն այդ քայլով կարողացել են խաղաղացնել ամբոխը: Իսկ առանձ, ուր էր առանձ այդ ոգով աշխատանքը, ուր էր նա, հակակշռելու այն եսական և ատելութեան քարոզը, որը լսուեց մեր երկրում անսովոր ուժով, որը փորձեց մեր լեռնային երկրի ձորերի և անդունդների չափ անդունդների բանալ խաղաղ աշխատանքի դարձած բաղմալեզու ժողովրդների մէջ: Եղան ի հարկէ դիմադրողներ և նրանք կազմում էին մեր լաւագոյն մասը, մեր փառքն ու պարծանքը, բայց ամուսնոր ցորենի հետ բուսաւ և չար ոգու սերմանած որոմն և խեղդեց բուսած ցորենի մի մասը: Եւ ուզում ենք կարծել, որ այդ մասից այն կողմ չի անցնիլ նրա ոյժը և մենք օր առանձ մաքրելով մեր հասարակական արտը որոմներից, մի միմիայն հայի հունձ կը պատրաստենք ապագայի համար: Կորացրէք գլուխներդ եղբայրասպան ժողովրդների հասկացող առանցնողներ, դուք յանցաւոր էք, որ ընդունակ չէք եղել դիմադրելու որոմն սերմանող սատանային, լուացէք իրար արիւնոտ ձեռքերը և դուք կոյր, խեղճ և խաւարի մէջ կորած մարդասպաններ և ընդունեցէք, թէ ինչ ոյժով էիք շարժւում և իրար կոտորում: Ապաշխարեցէք դուք Աստուծոյ պատգամներ ուսուցանող հովիւներ, որ ժամանակին չը կարողացաք բարի սերմ ձգել այդ խեղճ ժողովրդի սրտում և նրանց մաքուր աշխատող ձեռքերն ու ճակատը ազատ պահել աշխատակից և վիճակակից եղբօր արիւնով արատաւորուելուց: Ապաշխարեցէք, մեղայ գոչեցէք, դուք ժողովրդի դաստարակներ, որ փոխանակ Աստուծոյ պատկերով ստեղծուած մարդու մէջ աստուածայինը պատուաստելու, քաջալեր էիք հանդիսանում մարդկայինի, նեղ ազգայինի և ֆանատիկոսութեան և Արեւի անմեղ արեան նման մաքուր արիւնով ներկեցիք ձեր դարաւոր հայրենիքը: